

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՓԱՍՏԱԲԱՆ ՄՈԼՇԵՂ ՇՈԼՇԱՆՅԱՆԻ ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

29.09.2023 18:06



Փաստաբան Մոլշեղ Շոլշանյանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման գործընթացը գտնվում է ՀՀ փաստաբանների պալատի ուշադրության կենտրոնում:

Փաստաբան Մոլշեղ Շոլշանյանին ձերբակալելու վերաբերյալ 2023 թվականի սեպտեմբերի 28-ին տեղեկատվության հանրային աղբյուրներում տվյալներ տարածվելուց հետո ՀՀ փաստաբանների պալատի ներկայացուցիչն անմիջապես կապ է հաստատել քրեական վարույթն իրականացնող մարմնի հետ, ինչպես նաև փաստաբան Մոլշեղ Շոլշանյանի հետ՝ պարզելու նրա իրավունքների պաշտպանության հետ կապված հնարավոր աջակցության հարցերը: Պարզվել է նաև, որ Մոլշեղ Շոլշանյանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը չի առնչվում նրա մասնագիտական գործունեությանը:

Այնուհետև տեղեկություններ են ստացվել, որ դատարանի որոշմամբ Մոլշեղ Շոլշանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը:

Կալանավորվելուց անմիջապես հետո՝ 2023 թվականի սեպտեմբերի 29-ին, Փաստաբանների Պալատի նախագահ Սիմոն Բաբայանն այցելել է քրեակատարողական հիմնարկ, հանդիպել Մոլշեղ Շոլշանյանի հետ:

Հանդիպման ընթացքում փաստաբանը տեղեկացրել է, որ իր պաշտպանության հարցերով զբաղվում է փաստաբանական խումբ և տվյալ պահին այլ օժանդակության անհրաժեշտություն չի տեսնում:

Փաստաբանների պալատը կարևոր և անհրաժեշտ նախապայման է համարում փաստաբանի նկատմամբ հարկադրանքի միջոց կիրառելու հարցը քննարկելիս հաշվի առնել նաև նրա վստահորդների իրավունքների պաշտպանության հարցերը:

Տեղեկացնում ենք, որ ՀՀ փաստաբանների պալատը շարունակելու է ուշադրությամբ հետևել փաստաբան Մոլշեղ Շոլշանյանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման հետ կապված վարույթին:

Հ.Գ. Փաստաբանության մասին օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝

Փաստաբանների պալատի խնդիրներն
են՝ պաշտպանել իր անդամների իրավունքները և
օրինական շահերը պետական և տեղական
ինքնակառավարման մարմինների և
կազմակերպությունների հետ
փոխհարաբերություններում, ինչպես նաև
դատարանում:

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&  
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```